ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Սովորողի քննական և ստեղծագործական մտածողության խթանումը ուսուցչի մասնագիտական զարգացման արդյունքում

Հետազոտող ուսուցիչ՝ Ծովինար Ղազարյան

Երևանի Գ. Մարգարյանի 94 ավագ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1.ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ..... 5

1.1.Ուսուցչի դերը ապագային պատրաստ քաղաքացիներ կրթելու գործում 5

1.2.արդյունավետ դասարանային փորձի խորհուրդներ ուսուցչի մասնագիտական զարգացման ճանապարհին 6

1.3.Քննադատական մտածողությունը և խնդիրների լուծումը որպես քսանմեկերորդ դարի հիմնական հմտություններ եվ դրանց առանձնահատկությունները..... 7

ԳԼՈՒԽ 2 .ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ . 10

2.1.Ինչ է ստեղծագործ մածողությունը, ինչու և ինչպես զարգացնել այն..... 10

2.2 Ինչ է ստեղծագործ մտածողությունը..... 13

2.3 Ինչո՞ւ լինել ստեղծարար 14

2.4 Ինչպե՞ս զարգացնել ստեղծագործ մտածողությունը 15

2.5 Ինչպես ապահովել սովորողների ներգրավվածությունը դասին 17

2.6 Որոշ գործնական առաջարկներ ուսուցչին՝ աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման նպատակով..... 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որպես 21-րդ դարի ուսուցիչներ մենք պարտավոր ենք մեր աշակերտներին պատրաստել դիմակայելու ապագայի մարտահրավերն երին։ Այսօրվա ուսուցիչը կասկածի տակ չի դնում գիտելիքի կարևորությունը, սակայն գիտակցում է, որ այն բավարար չէ սովորողներին հաջող և բարեկեցիկ ապագա ապահովելու, ապագայի բազմակողմանի, ստեղծագործ և քննադատական մտածելակերպով օժտված քաղաքացի դաստիարակելու համար, ով ընդունակ է կրթություն ստանալուց հետո ինքնուրույն ձևավորել իր ապագան և նպաստել իր և իր երկրի զարգացմանն ու բարեկեցությանը։

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել քննադատական և ստեղծարար մտածելակերպի զարգացման կարևորությունը ապագայի լիարժեք քաղաքացիներ պատրաստելու գործում, առաջարկել գործնական եղանակներ տվյալ հմտությունները ձևավորելու համար՝ դրանք համարելով ուսուցչի մասնագիտական զարգացման կարևոր բաղադրիչ։ Սովորողների մոտ ստեղծաարար և քննադատական մտածողության հմտություններ ձևավորելու համար ուսուցիչը ինքը պետք է ստեղծագործող և քննադատական մտածելակերպով օժտված լինի քանի որ առանց դրա ուսուցիչներին ավելի հաջող և արդյունավետ կերպով կարող են փոխարինել ռոբոտները։ Ըստ իս դասավանդումը եթե բացառապես ստեղծագործական գործընթաց չէ, ապա այն նաև պարզապես նախագծերի վրա հիմնված կրկնվող գործողությունների հաջորդականություն չէ։ Դասավանդման հիմքում ընկած են ուսուցչի ունեցած գիտելիքները, նրա մասնագիտական վարպետությունը, անձնային որակները և այժմ նաև ՏՀՏ գործիքներին տիրապետելը։ Գիտելիքի կուտակումը, ընտրությունը, մեկնաբանումը և մատուցումը դասապրոցեսի ժամանակ բավական բարդ գործընթաց է և պահանջում է մտածողությոն բարձր մակարդակ։ Ըստ ընդհանուր ընկալման, ստեղծագործ անհատը ընդունակ է առաջարկել յուրահատուկ գաղափարիներ և լուծումներ և, հավանաբար, ունի նաև հակում դեպի արվեստը, որոնք անհրաժեշտ են նաև լավ ուսուցչին։ Ստեղծագործական մտածողության հմտությունների պակասը

ուսուցչի մոտ կարող է հանգեցնել այնպիսի փոխկապակցված խնդիրների առաջացմանը, ինչպիսիք են՝

1Ուսուցչի ճկուն մտածելու անկարողությունը հրատապ կամ անկանխատեսելի իրավիճակներում, ինչպիսիք են արագ արձագանքելը սովորողի պահանջներին և համապատասխան որոշումներ կայացնելը։

2Ուսուցչի անկարողությունը պատշաճ փոփոխություններ կատարել նյութը սովորողների համար ավելի մատչելի դարձնելու համար դասագրքային նյութի անհամապատասխանության դեպքում։

3. Ուսուցչի անկարողությունը զարգացնելու ազատ մտածողություն կրթական ճիշտ որոշումներ կայացնելու և խնդիրներ լուծելու նպատակով։

ԳԼՈՒԽ 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

«Մենք պետք է երեխաներին կրթենք նրանց ապագայի,

և ոչ թե մեր անցյալի համար»։

Սըր Արթըր Ս. Քլարք

1.1.Ուսուցչի դերը ապագային պատրաստ քաղաքացիներ կրթելու գործում

Այս համատեքստում բախվում ենք մի իրավիճակի, երբ մի կողմից սովորողների մոտ անտարբեր վերաբերմունք է դասերի հանդեպ, մյուս կողմից՝ գործատուն պահանջում է զարգացած ճանաչողական հմտություններով օժտված մասնագետների։ Ի՞նչ անելիք ունի ուսուցիչը այս համատեքստում։ Առաջարկությունները կարող են տարբեր լինել, բայց դրանց շարքում անպայման կլինեն՝

1. Սովորողների մոտ արթնացնել և կյանքի կոչել նոր գաղափարներ, լուծումներ և պրոդուկտներ։
2. Օգտագործել թվային գործիքները գիտելիքի բացահայտման, պաշարների ստեղծման և հաղորդակցության համար։
3. Կիրառել սովորողների ձեռք բերած գիտելիքները իրական կյանքի խնդիրների լուծման նպատակով։

Այս անելու համար ուսուցիչը պետք է հստակ գիտակցի կրթության նպատակը, այն է՝ սովորողների մոտ զարգացնել հիմնական հմտություններ և կարողունակություններ, որոնք վերաբերում են այն աշխարհին, որտեղ նրանք ապրում են և ապրելու են։ Այս հմտությունները նաև հայտնի են որպես 21րդ դարի հմտություններ կամ խորը ճանաչողական հմտություններ, որոնք ներառում են՝

1. Ինչպես աշխատել՝ հաղորդակցություն և համագործակցում;
2. Ինչպես մտածել՝ ա/ քննադատական մտածելակերպ /critical thinking/
   բ/ խնդիրների լուծման հմտություններ / problem solving/

գ/ ստեղծագործական մտածողություն և նորարարություն

դ/սովորել սովորելու կարողունակություն և ինքնաճանաչում

ե/ սովորելու շարունակական դրսևորում /lifelong learning/.

3. Ինչպիսի գործիքներ կիրառել աշխատելու համար՝

ա/ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների գրագիտություն։

բ/ մեդիա գրագիտություն։

4. Ինչպես ապրել աշխարհում՝

ա/ քաղաքացիություն և քաղաքացիական պատասխանատվություն։

բ/ մշակութային իրազեկություն։

Այս բոլոր հմտություններն ու կարողունակությունները անհրաժեշտ են սովորողների հետագա հաջողությունների համար։ Պետք է նշել, որ գիտելիքներն ու հմտությունները փոխկապակցված են և երբ սովորողները զարգացնում են դրանք միաժամանակ, նրանք ավելի արդյունավետ կերպով են սովորում։ Այսպիսով, գիտելիքներն ու հմտությունները աստիճանաբար խորանում են ուսուցման մակերեսային մակարդակից, և հմտությունների զարգացումը կախված է գիտելիքների ձեռքբերումից։ (Joe Kirby). Սովորողները նախ սովորում են մակերեսային գիտելիքը /օր.՝ փաստերը/, և այս գիտելիքին տիրապետելուց հետո է, որ ուսուցիչը կարող է անցում կատարել ավելի խորը ճանաչողական գիտելիքների զարգացմանը, այն է թե սովորողները ինչպես են կիրառում տվյալ փաստերը նոր հմտությունների ձեռքբերման համար։

1.2.արդյունավետ դասարանային փորձի խորհուրդներ ուսուցչի մասնագիտական զարգացման ճանապարհին

Ուսուցիչը ընդունակ է արդյունավետորեն ձևավորել անհրաժեշտ հմտությունները սովորողի մոտ միայն դասապրոցեսի մանրամասն պլանավորման

արդյունքում: Այսպիսով՝ ուսուցչի մասնագիտական աճը նրա ամենօրյա աշխատանքի արդյունքն է հանդիսանում:

Այստեղ հարց է առաջանում, թե ուսուցիչը ի՞նչ արդյունավետ մոտեցումներ կարող է կիրառել այս նպատակներին հասնելու համար: Անկասկած է, որ մեծ դեր կարող է խաղալ ինտերակտիվ աշակերտակենտրոն մանկավարժությունը, որի արդյունավետ մոտեցումներն են՝

1. Հաշվի առնել սովորողի նախնական գիտելիքները և դրական վերաբերմունք դրսևորել սովորողի նկատմամբ:
2. Ընդլայնել սովորողի ինքնաճանաչողությունը, սովորելու ինքնակամ մղումը:
3. Ուսուցչի հետադարձ կապի տրամադրումը սովորողին / շարոնակական և ներառական/:
4. Համագործակցային ուսուցումը ներառյալ սովորողների միմյանց աջակցելը, սովորեցնելը, զույգերով և խմբային աշխատանքը:
5. Դասի պլանավորումը, որը ներառում է դասավանդման բազմազան մոտեցումներ:
6. Բանավոր հարցումներ /ինտերակտիվ հարցման ոճը, երկխոսությունը/:
7. Ուսուցման նյութերի կիրառումը / թվային և ոչ-թվային, տեղական պաշարներ/:

1.3.Քննադատական մտածողությունը և խնդիրների լուծումը որպես քսանմեկերորդ դարի հիմնական հմտություններ եվ դրանց առանձնահատկությունները

Ակնհայտ է, որ հեշտ չէ, սակայն հնարավոր է ինչպես քննադատական մտածողություն և խնդիրների լուծում սովորելը, այնպես էլ սովորեցնելը: Խնդիրն այն է, որ դա հիմնականում ուսուցչի նախաձեռնությունն է ՝ հիմնված նրա ստեղծագործական և քննական մտածելակերպի և հետաքրքիր ու տարբերվող դասեր անցկացնելու ոգևորության վրա: Այս ուղղությունը դեռ նախնական զարգանման փուլում է շատ կրթօջախներում և նույնիսկ ուսուցչի վերապատրաստման ոչ

միջազգային /CELTA, DELTA/ և ոչ ազգային դասընթացները չեն ներառում որևէ լուրջ մոտեցում զարգացնելու ուսուցչի ստեղծագործական և քննական մտածելակերպը առաջարկելով համապատասծան մեթոդներ կամ գործիքներ: Այս համատեքստում էլ ավելի կարևոր է դասռնում քննադատական մտածողության ավելի խորը ուսումնասիրությունը և այն դասապրոցեսում ընդգրկելը:

Գիտնականները տարբերում են մտածողության երեք տեսակներ՝ դատողություն, որոշումների կայացում և խնդիրների լուծում: Քննադատական մտածողությունը մտածողության առանձնահատուկ ձև է, որն ակնարկաում է, որ մտածողությունը կարող է լինել քննադատական և ոչ-քննադատական: Մտածողությունը քննադատական է, եթե ունի հետևյալ երեք առանձնահատկությունները՝

1. Արդյունավետ է՝

   Քննադատական մտածողությունը խուսափում է տարածված սխալներից, ինչպիսիք են, օրինակ հարցին միայն մեկ տեսանկյունից նայելը, նոր ապացույցների անտեսումը մտածողի նախկին տեսակետներին չհամապատասխանելու դեպքում, տրամաբանության վրա չհիմնված դատողությունը:

2. Նոր է և յուրահատուկ՝

   Քննադատական մտածողությունը առաջարկում է նոր լուծումներ և ուղիներ, որոնք նման չեն նախկինում հանդիպած նմանատիպ լուծումներին և ուղիներին:

3. Ինքնակամ է՝

   Քննադատական մտածողությունը ինքնուրույն, ազատ մտածելու կարողությունն է, որն ամբողջովին չի վերահսկվում ուրիշի կողմից, ներառյալ՝ ուսուցչի:

   Արդյունավետ մտածողությունը նաև ենթադրում է ազատ մտածելակերպի առկայություն, երբ մտածողը բաց և հանդուրժող է ցանկացած նոր գաղափարի համար, նույնիսկ եթե այն հակասում է սեփական կարծոքներին: Մենք զարգանում

ենք նոր ինֆորմացիայի ընդունման և սեփական տեսակետները երբեմն հերքելու արդյունքում, որը հատկապես ճիշտ է գիտական նվաճումների բնագավառում։

Սեփական կարծիքից հրաժարվելը հատկապես դժվար է, երբ հիմնահարցը զգացմունքային բնույթ է կրում։ Ահա հենց այս պատճառով է, որ նոր ինֆորմացիայի ընդունման համար բաց և պատրաստակամ լինելը այնքան կարևոր և պետք է անպայման ներդրվի դպրոցում, որպեսզի այն դառնա սովորություն։

Կարևոր է նաև հաշվի առնել, որ քննադատական մտածողությունը ավելին է, քան սովորողին ուղղակի ինպես մտածել սովորեցնելը։ Պատմական իրողությունների մասին քննադատական վերլուծություն անելը դեռ չի նշանակում, որ նույն մարդը կարող է քննադատաբար մտածել գյուղատնտեսության կամ լեզբաբանության ոլորտում։ Հետևաբար, բացի քննադատական մտածելակերպից անհրաժեշտ է նաև ունենալ գիտելիքներ տվյալ բնագավառի մասին։

ԳԼՈՒԽ 2 .ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Սովորողների մոտ ստեղծագործական մտածելակերպի զարգացումը շատ է կարևորվում ներկայումս, չնայած բավական դժվար է գտնել այս երևույթը ճշգրտորեն բացատրող սահմանում: Հետևաբար շատ ավելի հեշտ է ներկայացնել և նկարագրել որոշ կրթական, երևակայությունը զարգացնող մեթոդներ, որոնք անուղղակիորեն սահմանվում է որպես ստեղծագործական: Ստեղծագործական մտածելակերպը խթանելը հեշտ չէ, և ուսուցիչն անկասկած բախվելու է շատ մարտահրավերների այդ գործում: Բայց ցանկացած արդյունավետ փորձի դեպքում պետք է խրախուսել և փորձել տարածել դա մանկավարժական համայնքում և ներառել ուսումնական ծրագրերում: Այստեղ տեղին և զվարճալի է հիշել Sir Ken Robinson-ի ելույթից մի անեկդոտ, որին, հնարավոր է, ծանոթ եք: Երբ նկարչության դասին մի վեցամյա աշակերտուհի ասում է, թե պատրաստվում է Աստծուն պատկերել, ուսուցիչը զարմանում է, թե ոչ ոք չի տեսել Աստծուն և չգիտի, թե ինչպիսին է նա, աղջիկը պատասխանում է, որ մի րոպեից բոլորը կիմանան: Սա ստեղծագործ մտքի ազատ դրսևորման վառ օրինակ է, որը ցույց է տալիս երեխաների ստեղծագործական մեծ ներուժը, որը հաճախ դպրոցական ուսումնառության արդյունքում մնում է թերզարգացած կամ ընդհանրապես մարում է:

2.1.Ինչ է ստեղծագործ մածողությունը, ինչու և ինչպես զարգացնել այն

Այժմ եկեք պարզաբանենք, թե ինչ է ստեղծագործ մտածողությունը, ինչու է այն կարևոր օտար լեզվի դասավանդման ընթացքում, փորձենք հասկանալ, թե ինչպես կարող է ուսուցիչը ստեղծագործական գաղափարները փորձարկել դասապրոցեսում:

Ստեղծագործ մտածողությունը անկասկած կարևոր է և կյանքում, և լեզվի ուսումնասիրության և դասավանդման մեջ: Այն իսկապես առավելություն է, որը բարձրացնում է և կյանքի, և ուսուցման որակը, սակայն ամենաբարդը դա իրականություն դարձնելն է: Միևնույն ժամանակ, ստեղծագործական

մտածողությունը ընդհանրապես չի առնչվում վիճակագրական ցուցանիշներով արտահայտված գիտելիքի ստուգման, արդյունքների արագ ստացման չափելի «արդյունավետության» հետ, որոնց վրա հիմնված է այսօրվա կրթությունը: /Robinson, 2001/: Երբեմն մենք չենք էլ փորձում կենտրոնանալ ստեղծագործական մտածողության բնույթի վրա, քանի որ ենթադրում ենք, որ կտարբերենք այն տեսնելիս: Ստեղծագործական մտածողությունը վերաբերում է և ուսուցչին, և սովորողին հավասարապես: Այն համամարդկային է, չնայած նրա դրսևորումը կարող է լինել սպեցիֆիկ կամ տեղային:

Շատ ուսուցիչներ դասավանդելիս ցուցաբերում են ստեղծագործաբար: Նրանք օգտագործում են պատկերավոր և նորարարական մոտեցումներ դասերը ավելի հետաքրքիր և հիշարժան դարձնելու համար: Այսպիսի դասեր անցկացնելու համար անհրաժեշտ չեն սարքավորումներով հագեցած դասասենյակներ: Այստեղ ամենակարևոր ռեսուրսը մարդն է, ստեղծագործող անհատը՝ իր յուրահատուկ մտածեղությամբ, նախընտրություններով և փորձով: Այստեղ կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ ինչքան էլ ստեղծագործ միտք ունենա ուսուցիչը, նա կարիք ունի փոխելու իր աշխատառճը սովորողի մոտ հատկապես ստեղծագործական մտածողություն զարգացնելու համար: Դա մանրակրկիտ պլանավորված մտածական գործընթաց է, որը ենթադրում է սովորողներին դրդել կայացնելու համապատասխան որոշումներ նախօրոք պատրաստած հարցադրումների և հետազոտական աշխատանքի միջոցով: Ուսուցիչը կարող է սովորողի մոտ հարցադրումների միջոցով արթնացնել հետաքրքրասիրություն, խթանել գաղափարների առաջացում և երևակայական խաղեր, սովորողին դրդել երկխոսության և համագործակցության:

Բացի այս ամենը, կարևոր է նաև ստեղծել համապատասխան մթնոլորտ ստեղծագարծ մտածելակերպի զարգացման համար: Կարևոր է ամրապնդել վստահության զգացումը ուսուցիչ-սովորող և սովորող-սովորող հարաբերություններում: Նաև անհրաժեշտ է, որ ուսուցիչը կարողոնա զսպել աշակերտների սխալներն անընդհատ ուղղելու իր երբեմն անհաղթահարելի մղումը:

Ստեղծագործ մտածողությունը հնարավոր չէ գնել, ներբեռնել կամ երաշխավորել, բայց կարելի է այն ամրապնդել ճիշտ միջավայրում: Զարգացնելով անհատական հայեցակարգային հիմքեր /individual conceptual frameworks/ շրջապատող աշխարհը հասկանալու համար ուսուցիչը խրախուսում է աշակերտին ձեռք բերել անհրաժեշտ վստահություն թերահավատորեն վերաբերվելու որոշ կարծրատիպերի և ազատվելու դրանցից առանց վախենալու տարակարծությունից և առկա ցինիզմից /Greenfield, 2014/:

Հասարակության մեջ կա մի ձևավորված միտում, ըստ որի ուսուցիչը պետք է օրինակ ծառայի սովորողի համար: Հետևաբար, ուսուցիչը չի կարող ստեղծագործական մտածելակերպ զարգացնել սովորողների մոտ, եթե այն բացակայում է ուսուցչի մոտ: Եթե ուսուցիչը ուզում է,որ իր աշակերտը երգի, ուսուցիչը նույնպես պետք է երգի: Եթե ուսուցիչը ուզում է իր աշակերտը գրի երգեր, բանաստեղծություններ կամ նկարի, ուսուցիչն էլ պետք է նույնը անի: Այս հնարավոր դարձնելու համար, ուսուցիչը պետք է խմբի, դասարանի մաս կազմի, և ոչ թե լինի մեկը, ով վերևից կամ դրսից է հետևում դասին:Այստեղ տեղին է հիշել Ստեվիկի այն միտքը, որ «ստեղծագործական մտածողության զարգացումը երևում է դասապրոցոսի ժամանակ, հաշվի առնելով այն, թե ուսուցչի շնորհիվ աշակերտը ինչ է անում, և ոչ թե այն, թե ինչ է անում ուսուցիչը» /Stevick, 1980:20/:

Քանի որ ակնհայտ է, որ միայն ստեղծագործ միտք ունեցող ուսուցիչը կարող է դաստիարակել նման սովորողի, ուսուցչից պահանջվում է ճանաչողական գիտելիքների բարձր մակարդակ այն մասին, թե ինչ է կարարվում մակերեսին և դրա տակ, և ընդունակություն պատշաճ արձագանքելու չնախատեսված իրավիճակներին /Underhill and Maley, 2012; Underhill 2014/: Երբեմն երբ ուսուցիչները նոր մեթոդներ են կիրառում դասին, խաղային մթնոլորտն ու տրամադրությունը կարծես ստեղծագործական մտածողության կարևոր բաղադրիչներն են կազմում: /Cook, 2000/: Նման մթնոլորտը խթանում և հեշտացնում է տարբերվող մտածողությունը և ազատում է մեզ աբն մտքից, թե հարցերը միշտ ունեն միայն մեկ ճիշտ պատասխան:

2.2 Ինչ է ստեղծագործ մտածողությունը

Որքան էլ դժվար լինի տալ ստեղծագործ մտածողության սահմանումը, այն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք գրեթե միշտ առկա են կրեատիվ գործողության մեջ: Դրա հիմքում ինչ-որ նոր բան ստեղծելու գաղափարն է, բայց միայն դա բավական չէ, որպեսզի տվյալ երևույթը կրեատիվ համարվի: Կրեատիվ համարվելու համար տվյալ գաղափարը կամ երևույթը պետք է ճանաչվի և ընդունվի տվյալ ոլորտում, լինի այնտեղ տեղին և կիրառելի, և ոչ միայն նոր:

Երբեմն կրեատիվ գաղափարները առաջ են անցնում իրենց ժամանակից և ստիպված են սպասել, որպեսզի տեխնոլոգիան էլ համաչափ զարգանա:Լեճնարդո դա Վինչին նախագծել է ինքնաթիռը տասնհինգերորդ դարում, բայց նախքան ինքնաթիռը իրականություն կդառնար, պետք է համապատասխան նյութերն ու վառելիքը հայտնագործվեին:

Վալլասն առաջիններից էր, ով փորձեց հասկանալ, թե որն է կրեատիվ մտածողությունը /Wallas, 1926, 2014/: Նա ուրվագծեց այդ գործընթացի չորս փուլերը՝ նախապատրաստում, սաղմնավորում, լուսավորում և հաստատում /preparation, incubation, illumination and verification/: Ունենալով որևէ «խնդիր» կամ «հանելուկ» ստեղծագործ միտքը սկզբում պատրաստվում է հավաքել ինչքան հնարավոր է շատ ինֆորմացիա այդ մասին: Նախապատրաստությանը հաջորդող հաջորդ՝ սաղմնավորման փուլում, մարդու գիտակից միտքը դադարում է մտածել խնդրի մասին՝ թողնելով. որ ենթագիտակցությունը ակտիվանա: Երրորդ՝ լուսավորման փուլում խնդրի լուծումը կարծես ակամա հայտնվում է: Չորրորդ՝ հաստատման փուլում գիտակից միտքը պետք է ստուգի, պարզաբանի, մշակի և ներկայացնի նոր գաղափարները:

Երբեմն շփոթություն է առաջանում մի կողմից ստեղծագործ մտածողության, մյուս կողմից բացահայտման և հայտնագործության միջև: Բացահայտումն այն է, ինչը միշտ գոյություն է ունեցել, սակայն մնացել էր աննկատելի և նոր է միայն վերհանվել:

Օրինակ, երկրի ձգողության ուժը չի ստեղծվել կամ հայտնագործվել Նյուտոնի կողմից. նա ուղղակի բացահայտել է դա: Ի հակադրություն բացահայտման, հայտնագործությունը մի երևույթ է, որը մինչ այդ գոյություն չի ունեցել: Նոր գրված բանաստեղծությունը կամ նոր նկարված կտավը հայտնագործության օրինակներ են, բայց նրանք կարող են նաև ստեղծագործ մտածողության հետևանքով ստեղծվել: Արդյոք կարելի է բացահայտումը իսկական ստեղծագործական մտածողության արդյունք համարել:

Հավանաբար դա կարելի է համարել կրեատիվության դիտարկում մյուս կողմից, երբ արդյունքը ոչ թե նոր «պրոդուկտ» է, այլ մինչ այդ չլուծված խնդրի կրեատիվ լուծում:

Որոշ գիտնականներ ստեղծագործ մտածողությունը նույնացնում են քննադատական մտածողության և խնդիրների լուծման հետ: Չնայած բազմաթիվ ընդհանրություններին, նախքան դրանք համարժեք համարելը, պետք է հասկանալ դրանց տարբերությունները: Խնդիրների լուծումն իսկապես կարող է նպաստել, որպեսզի սովորողները փորձարկեն և փորձեն գտնել բազմաթիվ հնարավոր լուծումներ հիմնվելով վերը նշված Վալլասի մոդելի վրա: Բայց դա նաև կարող է կատարվել պարզապես տրամաբանական, ռացիոնալ ճանապարհով, որն ընդհանրապես կապված չէ ստեղծագործ մտածելակերպի հետ: Խնդիրներ լուծելիս մեզ տրվում է լուծելու ինչ-որ մեկի խնդիրը, խնդիրներ գտնելիս մենք ստիպված ենք երևակայական թռիչք կատարել գտնելու և ընկալելու հավանական խնդիրները:

2.3 Ինչո՞ւ լինել ստեղծարար

Մենք չենք կարող խուսափել կրեատիվությունից: Մարդիկ ներքուստ հետաքրքրքսեր են եղել շրջակա միջավայրի հանդեպ, որը նրանք անխոնջ ուսումնասիրել են:

Ստեղծագործ մտածելակերպը նաև անհրաժեշտ է գոյատևման համար: Շնորհիվ ստեղծագործական նվաճումների, որոնցից են գյուղատնտեսությունը, անիվը, գրելու համակարգերը, տպագրությունը և այլ բազմաթիվ

հայտնագործությունները, մարդիկ դեռ քարանձավներում ապրելիս կլինեին: Ստեղծագործ մտածելակերպն օգնում է մեզ համակերպվել փոփոխությանը և աշխարհի անդադար ձևափոխությանն զուգընթաց դեռ ավելի ստեղծագործական մորեցումների և լուծումների անհրաժեշտություն կլինի:

Ուսուցման և դասավանդման համատեքստում, ստեղծագործական մտածողությունը կարծես խթանում, զբաղեցնում, մոտիվացնում և բավարարում է մասնակիցներին իմաստի իր խորությամբ: Կրեատիվության տեսակետից լավ կազմակերպված դասերը վկայում են մոտիվացիայի հզոր ուժի մասին, երբ ուսուցիչը թույլ է տալիս սովորողներին արտահայտվել ստեղծագործաբար: Միևնույն ժամանակ, կրեատիվությունը հակված է բարձրացնելու սովորողի ինքնագնահատականը, ինքնավստահությունը և իմացությունը:

Սեփական արժեքի բարձրացումը ներշնչում է սովորողին ավելի պատասխանատու վերաբերվել ուսմանը, որն էլ մեծացնում է դրա առդյունավետությունը:Մեր ստեղծագործական ընդունակություններն օգտագործելիս մենք մեզ ավելի ազատ և անմիջական ենք զգում:

2.4 Ինչպե՞ս զարգացնել ստեղծագործ մտածողությունը

Ստեղծագործ մտածողության համար ուսուցիչը պետք է ստեղծի բարենպաստ պայմաններ: Ուսուցիչը պետք է՝

1. Ստեղծի հանգիստ միջավայր, որտեղ սովորողները զերծ են քննադատությունից և ինքնավստահ են: Ուսուցիչները չպետք է կենտրոնանան աշակերտների սխալների վրա:
2. Առաջադրանքներն ընտրելիս ստեղծի սահմանափակումներ: Որքան էլ զարմանալի է, սահմանափակումներն օգնում են սովորողներին այն առումով, որ թե բովանդակությունը և թե առաջադրանքն կատարելու համար

պահանջվող լեզվական նյութը սահմանափակ են և սովորողն ազատ է ամեն ինչ իմանալու բեռից։

3. Ապահովի, որ սովորողների աշխատանքը որևէ կերպ «հրապարակվի»։ Ուսուցիչը կարող է սովորողներին առաջարկել որևէ պրոյեկտ, որը կարող է տպագրվել դասարանական ամսագրում։ Որոշ սովորողներ կցանկանան ստեղծել դասարանական կայք, որտեղ տեղ կգտնեն նրանց աշխատանքները։ Այս կերպ ուսուցիչը հանրայնացնում է իր աշակերտների աշխատանքները, որն էլ իր հերթին վստահություն է հաղորդում սովորողներին։
4. Խրախուսի իր աշակերտներին անկեղծորեն և ընկերաբար քննարկել աշխատանքները միմյանց հետ։ Այս կերպ կարող են շատ լավ գաղափարներ ծնվել։ Ուսուցիչը պետք է օգնի աշակերտներին հաստատել մի միջավայր, որտեղ քննադատությունը հնարավոր է, սակայն առանց անհատական վիրավորանքների։
5. Պարբերաբար բացատրի աշակերտին ճշգրիտ հետազոտություն կատարելու կարևորությունը և խրախուսի նկատելու մանրամասները։ Խրախուսի աշակերտներին հավաքել տեղեկություններ, որոնք կարող են հետո պետք գալ. դրանք կարող են լինել նկարներ, խաղեր, տեսա կամ ձայնագրություններ, կայքեր, գրքեր, ամսագրեր։
6. Չափավոր աշխատի, այն իմաստով, որ աստիճանաբար բարձրացնի իր և իր աշակերտների աշխատանքի որակը և չփորձի միանգամից մեծ արդյունքներ ունենալ։ / “Do not try to do too much. Takie it easy and be kind to yourself”. Casanave and Sosa, 2007/.
7. Աշակերտներին տեղեկացնի, որ իրենց դասարանում արածը ընդամենը մի փոքրիկ մասն է։ Դասարանական առաջադրանքներից ավելի մեծ արդյունք ստանալու համար սովորողները պետք է տանը շատ աշխատեն։ Մեր սովորածի մեծ մասը մենք դպրոցում չենք սովորում։

8. Աշխատի աշակերտների հետ հետևողականորեն արդյունքները բարելավելու համար։ Սովորողները չպետք է շատ ժամանակ բաց թողեն դասերի միջև և հավանաբար շաբաթական մեկ անգամը խելամիտ հաճախականություն է։ Այլապես սովորողները կվատնեն թե իրենց ժամանակը և թե էներգիան։
9. Ծառայի օրինակ իր աշակերտների համար, այսինքն աշխատի սովորողների հետև ոչ թե միայն ասի նրանց ինչ անել։ Սա հատկապես վերաբերում է ընթերցանության և շարադրության առաջադրանքներին։
10. Երբեք չթերագնահատի իր աշախերների կարողությունները։ Երեխաների ստեղծագործելու ներուժը կապշեցնի ուսուցչին, եթե նա կարողոնա բաացհայտել դա։
11. Եվ վերջապես, ուսուցիչը պետք է կիրառի չորս ոսկե սկզբունքները՝

    ա/ ԸՆԴՈՒՆԻ իր աշակերտների անհատականությունը,

    բ/ ԼՍԻ նրանց կարծիքը ուշադիր և առանց կանխակալ կարծիքի,

    գ/ ՀԱՄՈԶՎԻ, որ ինքը բավարար չափով է ծանրաբեռնում աշակերտներին,

    դ/ ԱՋԱԿՑԻ իր աշակերտներին, եթե նրանք դրա կարիքն ունեն։

    ԱՅՍ ԱՄԵՆԸ ՀԵՇՏ Է ՀՆՉՈՒՄ, ԲԱՅՑ, ԻՀԱՐԿԵ, ԴԱ ԱՅԴՊԵՍ ՉԷ։

2.5 Ինչպես ապահովել սովորողների ներգրավվածությունը դասին

Գտնելով օգտակար նյութեր ուսուցիչը պետք է այն համապատասխանեցնի դասի նպատակին և սովորողների ընդունակություններին։ Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ մեծ դասարաններում ուսուցիչը պետք է առավելագույնի հասցնի յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը դասին։ Այս պատճառով, զույգերով և խմբային աշխատանքները շատ կարևոր են։ Օրինակ, երբ ուսուցիչը դասարանին հարց է տալիս, լավ կլինի ասի. «Խնդրում եմ, ասա քո ընկերոջը, թե քո կարծիքով որն է ճիշտ

պատասխանը»:Միայն սրանից հետո ուսուցիչը աշակերտներից մեկին խնդրում է արտահայտել իր միտքը:

Մեթոդաբանորեն, կարևոր է նշել, որ մեդիայի և նյութերի հնարամիտ օգտագործումը սովորաբար բավական չէ: Ուսուցիչը ստիպված է համապատասխանեցնել դրանք աշակերտների դասին ներգրավվածությունը ապահովելու համար: Ընդհանուր առմամբ, աշակերներին կարելի է ներգրավել հետևյալ կերպ՝

1. Պատվիրել աշակերտներին ինչ-որ բարդ առաջադրանք կատարել. դա կարող է լինել իրերի համապատասխանեցում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ կերպով, խմբավորել, հաջորդաբար դասավորել կամ հիշել տվյալ նյութը:
2. Հրավիրել սովորողներին պատկերացնել, հորինել կամ կիսել իր կարծիքը:
3. Ուսուցիչը պետք է ավելի ուշադրություն դարձնի աշակերտների աշխատանքի բովանդակությանը, քան լեզվական գրագիտությանը:

Ուսուցչի գործը սկսվում է այն պահից, երբ երեխաները տեսնում են նրան: Ցանկացած տատանում, ցանկացած լարվածություն կամ կասկած սեփական ուժերի հանդեպ աշակերտների կողմից վայրկենապես նկատվում է: /Gladwell, 2006/:

Այո, ուսուցչի համար դժվար է աշխատել մեծ դասարանների հետ: Դժվար է օգնել և ուշադրություն դարձնել յուրաքանչյուր աշակերտի կարիքներին: Միաժամանակ, մեծ դասարանները առաջարկում են որոշ հնարավորություններ, որոնցից զրկված են փոքր դասարանները: Ցանկացած հարցումներ անցկացնելն շատ ավելի նպատակահարմար է մեծ դասարանների հետ:

2.6 Որոշ գործնական առաջարկներ ուսուցչին՝ աշակերտների ստեղծագործական մտածողության զարգացման նպատակով

1Գրել կամ պարզապես հնարել ինչ-որ երևակայական իրավիճակ կամ ճանապարհորդություն

Ուսուցիչը նախապես մտածում է մի երևակայական պատմություն, աշակերտներին խնդրում է փակել աչքերը , կարդում է նկարագրությունը դանդաղ և հստակ։ Այնուհետև հանձնարարում է յուրաքանչյուր աշակերտի պատրաստել մի կարճ տեքստ, որը նա կարող են կարդալ իր հարևանի կամ խմբի անդամի համար, ով կլսի նրան փակ աչքերով։ Եթե սովորողներին դուր գա այս առաջադրանքը, նրանց պատմությունները չպետք է դեն նետվեն։ Դրանք պետք է պահվեն և հանրայնացվեն։

2Դրամա և մնջախաղ

Դասագրքի երկխոսությունները դերախաղի վերածելը ընդունված դասարանական առաջադրանք է։ Այն պահանջում է մեծ զգացմունքայնություն, որն իմաստալից և հիշարժան է դարձնում լեզվի այսօրինակ կիրառումը։ Սովորողները նաև կարող ե մնջախաղոբ պատկերել կենդանիների, զգացմունքներ, առարկաներ և մասնագիտություններ… Աշակերտները հերթով նմանակում են կենդանու, առարկայի և այլն և մյուսներն արտահայտում են իրենց մտքերը։ Աշակերտները կարող են նաև նկարագրել գույները, ձևերը, առանձնահատկությունները, իրենց վարքագիծը։ Այս առաջադրանքը ակտիվացնում է սովորողների բառապաշարը։

3Պահմտոցի

Ուսուցիչը կամ աշակերտներից մեկն ասում է. «Ես թաքնվել եմ դպրոցում կամ քաղաքում։ Ձեր կարծիքով որտե՞ղ եմ ես թաքնվել։ Գուշակելու համար դուք կարող եք ինձ քսան հարց տալ։»։ «Թաքնված» մարդը պետք է նախօրոք թերթիկի վրա գրի, թե որտեղ է թաքնվել։

4Հարցային ցանց /Wh-question web/

Ուսուցիչը գրում է թեման կենտրոնի շրջանում, օրինակ՝ «ջրապտույտ», այնուհետև դրանից բխող սլաքների վերջում գրում է ի՞նչ, ինչո՞ւ, ե՞րբ, ինչպե՞ս, որտե՞ղ, ո՞վ։ Աշակերտները աշխատում են զույգերով և այս բառերով կազմում են իրենց հետաքրքրող հարցեր։ Հետո նրանք տեղեկություններ են հավաքում օգտվելով

համապատասխան կայքերից /ուսուցիչն ինքը կարող է ուղղորդել, թե երեխաները որ կայքերից օգտվեն/։ Այնուհետև երեխաները համեմատում են իրենց հարցերը և պատասխանները դասարանի կամ խմբերի հետ /եթե խմբերով են աշխատել/։ Այս ինֆորմացիան կարող է օգտագործվել որպես նախապատրաստական աշխատանք որևէ թեմայի մասին գրելուց առաջ։

5Պատկերացրեք, որ…

Ուսուցիչը կարող է օգտագործել այս մեթոդը մտածելու համար որոշ անհավանական բաների մասին՝ դրանով փորձելով զարգացնել եշաշակերտների ստեղծագործական մտածողությունը։ Պատկերացրեք, որ … ասենք կենդանիները կառող են խոսոլ/ մարդիկ քնի կարիք չունեն/ երեխաներն են ղեկավարում աշխարհը/ մենք տեղապօխվում ենք ապրելու Մարս մոլորակում։ Ի՞նչ կլինի։

6 Պատահական զուգորդումներ

Այս մեթոդը խրախուսում է երեխաներին զուգորդումներ կարարել առարկաների և այնպիսի երևույթների միջև, որոնց միջև չկա ակնհայտ կապ։ Ուսուցիչը փոքրիկ քարտերի վրա գրում է երեխաներին ծանոթ բառեր և դրանք դնում տուփի կամ գլխարկի մեջ։ Երեխաները հերթով հանում են յուրաքանչյուրը երեք պատակահան քարտեր և նախադասություն կամ փոքրիկ պատմություն են հորինում դրանցով։ Նույնը կարելի է անել նաև քարտերի փոխարեն օգտագործելով առարկաներ։

7Գտիր ավելորդը

Այս առաջադրանքն հիմնականում ունենում է մեկ ճիշտ պատասխան։ Այս տարբերակում երեխաները գտնում են ավելորդը՝ըստ իրենց պատկերացրած չափանիշների։Օրինակ, ենթադրենք՝ երեխաները վերջերս սովորել են թե ինչպես է պտուղը աճում և սա կառօղ է արվել քարտերի միջոցով։ Օրինակ, դեղձ, ելակ, սեխ.

արքայախնձոր և խաղող։ Երեխաները հերթով փորձում են գտնել ավելորդը և հիմնավորում են իրենց պատասխանը։ Օրինակ, «Իմ կարծիքով դեղձն է, դեղձերը կորիզ ունեն», կամ՝ «Իմ կարծիքով, ելակն է, որովհետև սերմերը դրսից են»։

8Քանի՞ ձևով…

Այս մեթոդը երեխաներին ճկուն և հնաարմիտ է դարձնում և կարող է հաճելի ձևով ավելացնել երեխաների բառապաշարը։ Ուսուցիչն ընտրումէ ամենօրյա օգտագործման առարկաներ, ինչպիսիք են օրինակ մետաղե կախիչ, քանոն, գիրք։ Երեխաները զույգերով աշխատում են դիտարկելով տվյալ առարկան բոլոր տեսանկյուններից և ասում, թե ինչ նպատակներով կարող է այն գործածվել։ Օր.՝ «Քանոնը կարելի է գործածել որպես սուր»։ Եթե երեխան բառը չգիտի, կարող է օգտվել բառարանից։

9Մտքերի քարտեզ

Մտքերի քարտեզ մեթոդը հիմնված է Թոնի Բուզանի աշխատաբքի վրա /Tony Buzan, 2003/ և թույլ է տալիս հետազոտել թեման կամ գաղափարը ավելի գրավիչ ձևով վիզուալ տեսանկյունից։ Այս մեթոդը կարող է գործածվել հետազոտելով գաղափարը համագործակցային եղանակով։ Գրեք թեմայի անվանումը գրատախտակի կենտրոնում, օր.՝ «փղեր» և երեք նախնական վերնագրերով ուղղորդեք երեխաներին մտածելու, օր.՝ արտաքինը, որտեղ և ինչպես են նրանք ապրում, ինչու են նրանք վտանգված։ Հերթով ընտրեք մի վերնագիիր, լսեք երեխաների մտքերը և ավելացրեք դրանք քարտեզի վրա։ Նախընտրելի է օգտագործել գունավոր գրիչներ կամ կավիճ և անհրաաճեշտության դեպքում ավելացնել ենթավերնագրեր /գույն, չափ, աֆրիկյան, ասիական/։Երեխաները կարող են նաև մտքի քարտեզի այս նկարագրությունը օգտագործել կազմելու մեկ այլ կենդանու մտքի քարտեզը որպես տնային աշխատանք և ներկայացնել այն հաջորդ ժամին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործական մտածողության զարգացումը կարևոր է անկախ առարկայից և սովորողի տարիքից: Ցանկության դեպքում, ստեղծագործական հմտությունները կարող են զարգացվել և փորձառու, և սկսնակ ուսուցիչների կողմից: Ցավոք, այս գործընթացը անդադար խոչընդոտների է բախվում կրթության ժամանակակից մոդելի պատճառով, որն անընդհատ ենթարկվում է ինստիտուցիոնալ ուսումնածրագրային և գնահատման սահմանափակումների: Հուսով եմ, այս հետազոտական աշխատանքը կոգևորի որոշ ստեղծագործ ուսուցիչների բացահայտել իրենց կրեատիվ մտածողությունը և նորովի մատուցել իրենց դասերը արդյունավետ մեթոդների կիրառման շնորհիվ, որի արդյունքում մենք կունենանք ավելի ստեղծագործ, ազատ և անկաշկանդ մտածող սերունդ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. teachercommunity.teachingenglish.org

   Creativity in the English language classroom

   Editied by Alan MAley and Nik Peachey

2. teachercommunity.teachingenglish.org

   Unlocking a world of potential

   Core skills for learning, work and society edited by Dr Jo Beall